ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20-ը մարտի, 2018թ., N08

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 20.03.2018Թ. ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 20.03.2018թ. թիվ 03 նիստի օրակարգը՝
1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի թիվ 43-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
2.Հայանիստ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասը օտարելու և ուղղակի վաճառքով վաճառելու մասին:
3.Հայանիստ համայնքի 2018թ. վարչական բյուջեի ծախսային փոփոխությունները հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

20.03.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20-ը մարտի, 2018թ., N09-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2017Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ *ավագանին որոշում է՝*

Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայանիստ գյուղական համայնքի Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների՝ 2018թ. դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 43-ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
1. Որոշումը ավելացնել 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«2. Այլ համայնքի բնակիչների երեխաների համար «Հայանիստ համայնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող ծնողական վճարի՝ 2018 թվականի դրույքաչափը սահմանել 10.000 դրամ»:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

20.03.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20-ը մարտի, 2018թ., N10-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է՝

1.Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Մամիկոնյան փող., 1-ին նրբ., 1-ին փկղ., թիվ 3/1 հասցեում գտնվող 03-052-0201-0031 ծածկագրով 0.01566 հա բնակելի կառուցապատման հողամասը օտարել և ուղղակի վաճառքով վաճառել Կարեն Հրահատի Բաղալյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 82690 /ութսուներկու հազար վեց հարյուր իննսուն/ ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

20.03.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20-ը մարտի, 2018թ., N11-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ *ավագանին որոշում է՝*

1. Հաստատել 2018թ. վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները.
Վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխություն
1) 01.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.
4241 հոդվածին ավելացնել 12.012 /տասներկու հազար տասներկու/ դրամ և պլանը հաստատել 85.000 /ութսունհինգ հազար/ դրամ:
2) 09.2.1 Հանրակրթական ուսուցում.
4639 հոդվածի երրորդ և չորրորդ եռամսյակներից 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/-ական դրամ տեղափոխել երկրորդ եռամսյակ:
3) 11.1.2 Պահուստային ֆոնդ.
4891 հոդվածից պակասեցնել 12.012 /տասներկու հազար տասներկու/ դրամ, պլանը հաստատել 3.109.661 /երեք միլիոն մեկ հարյուր ինը հազար վեց հարյուր վաթսունմեկ/ դրամ և 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ տեղափոխել երկրորդ եռամսյակից երրորդ և չորրորդ եռամսյակներ:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

20.03.2018թ.
գ. Հայանիստ